



Web: www.aarhus.am , mob: 077 76 46 41, 093 99 12 12	E-mail: blejanli@gmail.com aarhusnews@gmail.com
--	--

N AA-003

11 օգոստոսի 2015թ.

ՀՀ Վարչապետ պարոն
Հովիկ Աբրահամյանին

Մեծարգո՝ վարչապետ,

ս.թ. օգոստոսի 10-ին իրանական պաշտոնական <http://www.presstv.ir/> կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն, Իրանը նախատեսում է վերակենդանացնել Ուրմիա լիճը և մտադիր է ջուր վերցնել Հայաստանից՝ Սևանա լճից և Վրաստանից՝ Քուր գետից (Ամբողջական հոդվածը հետևյալ հղումով՝

<http://presstv.ir/Detail/2015/08/10/424044/Iran-lake-Urmia-Armenia-Georgia>):

Հոդվածում նաև նշվում է, որ այդ տեղեկատվությունը իրանական լրատվամիջոցներին է հայտնել Իրանի Ազգային ժողովի պատգամավոր Ալի Ալիլոուն:

Հարգելի՛ պարոն վարչապետ,

խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն, թե արդյո՞ք վերոնշյալը համապատասխանում է իրականությանը. ե՞րբ և ի՞նչ մակարդակով է Սևանից Ուրմիա լճի վերականգնման նպատակով Իրանին ջուր տալու հարցը քննարկվել, ի՞նչ պայմանավորվածություն է ձեռքբերվել:

Հարգանքով՝

Հայաստանի Օրհուս կենտրոնների համակարգողների անունից և հանձնարարությամբ,
Հայաստանի Օրհուս կենտրոնների տեղեկատվության պատասխանատու՝

Մարի Զաքրյան



Էկոլոգիական հասարակական դաշինքի համակարգող՝

Միլվա Ադամյան